«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	ԱՐԵՎԻԿ ՇԱՎԱՐՇԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ
ՈՒՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԳԵՏՔԻ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...……...…….3

ԳԼՈՒԽ 1. Դպրոց-ընտանիք հարաբերությունների էությունը արդի պայմաններում

1.1. Դպրոց - ընտանիք հարաբերությունների էությունը…….…...…….6

1.2Դպրոց-ընտանիք կապի առանձնահատկությունները……10

Գլուխ 2. Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման եվ ընտանեկան դաստիարակության հարցերում……15

2.1 Ուսուցիչների դերը դպրոց-ընտանիք կապի արդյունավետ իրականացման գործում……....15

2.2 Հետազոտական աշխատանքի վերլուծություն……..18

Եզրակացություն……22

Օգտագործված գրականության ցանկ……24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հնուց ի վեր կրթությունը և դաստիարակությունը ելակետային դեր են խաղացել յուրաքանչյուր երկրի զարգացման ու կենսունակության մեջ և համարվել հասարակական ու ազգային գլխավոր հարստություններից մեկը: Երկրի բարգավաճումը շաղկապված է արդյունավետ կրթության հետ, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ժողովուրդ, ելնելով իր մշակութային ու գիտական նախադրյալներից, աշխատում է լավագույնս օգտվել հասարակական այդ կառույցից՝ կրթել ու դաստիարակել լավ քաղաքացիներ և իր զարգացման, առաջադիմության ու բարեկեցության հիմքերը դնել: Այս նպատակներն իրագործելու համար հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել կրթության համակարգի քաղաքականությանն ու ռազմավարությանը և գիտական սկզբունքների ու ձեռքբերումների հիման վրա մշակել համապարփակ ու նպատակային ծրագրեր: Մեր օրերում միլիոնավոր աշակերտներ կրթություն են ստանում դպրոցներում, և միլիոնավոր ծնողներ ևս սերտորեն առնչվում են այս կառույցի հետ: Բացի այդ, դպրոցում են աշխատում հազարավոր ուսուցիչներ, փոխտնօրեններ, տնօրեններ և գրասենյակային կադրեր, որոնց հատկացվում է մեծածավալ ֆինանսական ռեսուրսներ: Ընտանիքներն այսօր անցյալի համեմատությամբ շատ ավելի մեծ ուշադրություն են դարձնում իրենց զավակների կրթության որակին, իսկ դպրոցն ավարտած աշակերտները կարևոր ազդեցություն են թողնում հասարակության տարբեր աշխատաճյուղերում ու մասնագիտություններում: Այս բոլոր հանգամանքներն ընդգծում են մեր հետազոտության թեմայի՝ «Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման եվ ընտանեկան դաստիարակության հարցերում» ուսումնասիրության արդիականությունը:

Այսօր կրթության համակարգի լայնածավալ ընդարձակման ու հասանելիության և հանրային գիտակցության ու տեղեկացվածության բարձրացման հետևանքով կրթության համակարգը գտնվում է հասարակության

ուշադրության կենտրոնում: Մյուս կողմից, աշխատաշուկայում մեծանում է հմուտ ու որակավորված շրջանավարտների պահանջարկը, ուստի կարևորվում է դպրոցների կառավարման հարցերի ուսումնասիրությունը, առկա թերությունների բացահայտումն ու վերլուծությունը և նոր ու նպատակահարմար լուծումների վեր հանումը:

Ընտանիքը՝ որպես մարդկային սոցիալական կեցության հիմնական ձև, մոդել և համայնքի կառուցվածքային միավոր, համարվում է պետական հոգածության առարկա: Ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտի կարևորագույն գործառույթը աճող սերնդի դաստիարակությունը, զարգացումն ու սոցիալականացումն է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային տեղաշարժերի հորձանուտում աղճատվում է նաև ավանդական ընտանիքի նկարագիրը արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության, դպրոցի, ընտանիքի և ընդհանրապես համայնքի համագործակցության հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից ուսուցիչները իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն ուսուցիչների, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Սոցիալ-մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան դաստիարակության՝ հարգանքի և վստահության վրա հիմնված ոճերը, ծնողների հեղինակությունը, ընտանիքում երեխայի հետ շփման առանձնահատկությունները նպաստում են ներընտանեկան կապերի

ամրապնդմանը, բարոյական բարձր պատասխանատվության մթնոլորտի, փոխօգնության ավանդույթների ձևավորմանը: Ընտանիքը եղել և տեսանելի ապագայում էլ կլինի աճող սերնդի դաստիարակության հիմքը: Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական հուզական և հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար, և որոնց բացակայությունը կարող է հանգեցնել ներընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, օտարացման և սերունդների միջև կյանքի իմաստաձևավորող կապերի ընդհատման:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել արդի պայմաններում ուսուցիչների դերը դպրոց-ընտանիք կապի ամրապնդման ու զարգացման գործում և բացահայտել դպրոց-ընտանիք կապի զարգացման էությունը և առանձնահատկությունները:

Առաջադրված նպատակից բխում են հետազոտության հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել դպրոց-ընտանիք հարաբերությունների էությունը, արդի պայմաններում:

2. Ներկայացնել արդի պամաններում ուսուցիչների դերր դպրոց-ընտանիք կապի զարգացման գործում:

5. Անցկացնել սոցիոլոգիական հարցումներ, նկարագրել իրավիճակներ, կազմակերպել միջոցառումներ, առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրության նպատակով:

Հետազոտության մեթոդներ: Հետազոտության համար օգտագործվել են էմպերիկ և տեսական մեթոդներ: Էմպերիկ փորձագիտական մեթոդներից՝ տեղեկատվության հավաքման, ընդհանրացման և վերլուծության մեթոդները, անկետավորման, սոցիալոգիական հարցումը կամ հարցաթերթիկային հետազոտությունը: Տեսական մեթոդներից կիրառվել են՝ զրույցը, դիտումը, գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը:

ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանիքը՝ հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ավելին, սխալված չենք լինի, եթե նշենք, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել դեռևս սաղմնային վիճակում: Հետևապես դատիարակության մեջ կարևորը նրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Ինչպես ասում են ծուռ տնկած ծառը դժվար է ուղղել: Դպրոցում ուսուցիչը սովորեցնում և դաստիարակում է, իսկ հայրն ու մայրը, ապրելով երեխայի հետ, հաղորդակից լինելով բազմաթիվ կենսապայմաններում՝ երեխաների վրա ներգործելու ավելի լայն հնարավորություն ունեն: Սիրելի ծնողներ, եկեք արդյունավետ օգտագործենք այդ հնարավորությունը՝ առավել համբերատար կերպով ծառայեցնելով այն ճիշտ նպատակին: Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքի առկայությունն է:

Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են հանգիստ, հավասարակշռված, եռանդուն ու կենսուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության չափը[1]:

Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները կամ ընդհակառակը, երեխային անընդհատ պարսավանքի ենթարկել, պատժել և այլն: Դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից: Դերժինսկին նշում էր. "Ծնողների սերը կույր չպետք է լինի: Երես տված և փափկասուն երեխաները, որոնց ամեն մի քմահաճույք կատարվում է ծնողների կողմից,

[1] Բալյան Ա.Ա.,Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան; Լույս 1983թ. էջ 98:

մեծանում է այլասերված, թուլամորթ, եսամոլ": Շատ ծնողներ, քաջ գիտակցելով երեխայի դաստիարակության ժամանակ իրենց դերը, երբեմն մոռանում են ուսուցման ընթացքում անհրաժեշտ դերի մասին, կամ կարծում են, որ երեխայի ուսուցումը պարտավոր է իրականացնել միայն դպրոցը: Իրականում երեխայի հիմնավոր գիտելքների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է պահպանել ընտանիք-դպրոց համաձայնեցված փոխհարաբերությունները: Միայն այդ համագործակցության արդյունքում է հնարավոր կուտակել երեխայի մնացորդային գիտելիքների առավելագույն պաշար:

Երեխաների և մեծահասակների հարաբերություններից կարելի է առանձնացնել մի գործունեություն, որը մենք անվանում ենք ուսուցում: Այս գործունեությունը առանձնանում է երեխային գիտելիքներ և հմտություններ փոխանցելու հատուկ եղանակներով: Դպրոցում իրականացվող գործունեության մեջ մանկավարժները առանձնացնում են երեք կարևոր հասկացություն խաղ, աշխատանք և բուն ուսումնական գործընթաց[2]:

Վերջին ժամանակներում տարածված է ուսուցում խաղի միջոցով հասկացությունը: Ի՞նչ է այն նշանակում: Մանկավարժները փորձում են երեխայի համար հաճելի զբաղմունքը ծառայեցնել ուսումնադաստիարակչական նպատակներին, խաղը դարձնել "արդյունավետ": Երբ երեխան խաղում է, նա սովորում է, սակայն կարևոր է, թե ինչով է նա խաղում և ինչ պայմաններում: Կան խաղեր, որոնք մարզում են երեխայի տրամաբանությունը, ստեղծագործաբար մտածելու ունակությունը, վերլուծական միտքը և այլն (կառուցողական խաղեր, սյուժետադերային խաղեր, շարժախաղեր, հոգեբանական խաղեր և այլն):

Մանկավարժների դերը երեխաներին գրագետ խաղալ սովորեցնելն է: Այս ամենը հաշվի առնելով՝ միևնույն ժամանակ պետք է հասկանալ, որ բուն ուսումնական գործընթացը անհրաժեշտ է առանձնացնել խաղից: Հենց դաստիարակման պրակտիկան է տանում ոչ կտրուկ, բայց ուսուցման ու խաղի տարանջատմանը: Ուսուցումը հետաքրքիր կազմակերպելու պարագայում երեխաները հեշտությամբ են թողնում խաղը, նրանց մոտ աստիճանաբար

[2] Էլկոնին Դ. Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն ,Երևան; Լույս 1975թ. էջ 114:

առաջանում են առավել խորը ճանաչողական պահանջներ, որոնք չեն բավարարվում խաղի ընթացքում: Ուսումական գործընթացում երեխան յուրացնում է գիտելիքներ, հմտություններ, սովորում է լսել, տեսնել, դառնում է ավելի կազմակերպված: Ուսուցումը նաև նրանց մոտ ձևավորում է մեծահասակներին արձագանքելու կարողություններ և ավելի հեշտ է դարձնում մեծահասակների հետ շփումը:

Աշխատանք ասելով հասկանում ենք երեխաների կողմից իրականացվող այնպիսի գործունեություն, որն առավել մոտ է իրականությանը և տալիս է կենցաղային հմտություններ. Օրինակ մանկավարժները փորձում են երեխաների հետ կազմակերպել շինարարական աշխատանքներ հենց բնական շինարարական նյութերով, կամ երեխաները կարող են զբաղվել խոհարարությամբ: Աշխատանք է համարվում նաև այն, որ երեխաները հավաքում են թափված խաղալիքները կամ խնամում են դրանք: Սիրելի հայրիկներ և մայրիկներ, շատ օգտակար է, եթե դուք նույնպես երեխաներին ներգրավեք աշխատանքների մեջ:

Օրինակ՝ մայրիկները կարող են երեխային մասնակից դարձնել խոհանոցային աշխատանքներին, իսկ հայրիկների հետ միասին նրանք կարող են դռան կոտրված փականը նորոգել: Այսպիսով՝

1. խաղ,
2. աշխատանք,
3. բուն ուսումնական գործընթաց[3]:

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում ուսումնական հաստատություններում: Ընտանիքի ազդեցությունը երեխաների զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության համար ամուր հիմքը ծնողների միմյանց սերն է:

Առաջին պայմանը ընտանեկան համախումբն ձևավորումն է պարտքի ու պատասխանատվության խոր զգացումն է, երեխաների իրար նկատմամբ սիրո, բոլոր հարազատների նկատմամբ հարգանքի բարձր զգացողության և բարձր

[3] Ասատրյան Լ.Թ.,. Կարապետյան Ա. Ս., Ասատրյան Մ. Ա. Ցոլակյան Թ. Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները. Երևան 2003թ. էջ 79

զգացմունքի ձևավորումն է: Ընտանեկան դաստիարակության երկրորդ պայմանը չափավորությունն է: Երեխային չի կարելի անընդհատ պատժել և երես տալ բոլոր պահանջները կատարել: Երրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքայնության կայունությունն է, այս դեպքում սկզբունքայնությունը վերաճում դառնում է վճռական: Չորրորդ կարևոր պայմանը երեխաների հայրենասիրական հումանիստական, կոլեկտիվիստական, աշխատանքային զգացմունքների ձևավորումն է և դաստիարակումը: Ընտանիքում կարևոր նշանակություն ունի երեխաների բարոյական այնպիսի որակների ձևավորում ինչպիսիք են մանկական հաղորդակցության դերը: Մեծ նշանակություն ունի ծնողների անձնական օրինակը, ինչպես նաև նրանց կողմից խելացի վերահսկողության դերը: Մեծ նշանակություն ունի աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության դերը, որոնք պետք էր իրականացնել ըստ տարածքային փուլերի: Ընտանեկան դաստիարակության համակարգում կարևոր է դպրոցականների ուսման բարձր արդյունավետությունն ապահովելու համար ծնողները կատարում են մի շարք պայմաններ: Դպրոցը պետք է հաշվի առնի ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները: Մեզ մոտ ամենաշատ դերը տրվում է մորը, տատիկին, ժամանակակից ընտանիքի համար բնորոշ է ծնողների կրթական, հասարակական գործունեություն: Ծնողները սկսել են դպրոցից պահանջել ավելին: Ընտանեական դաստիարակության սկզբնաղբյուրն է ինչ կատարվում է երեխայի դաստիարակության և նրա անձնավորության ձևավորման գործում: Ուրեմն դպրոցը ընտանիքի օգնականն է և պետք է օգնի ծնողին մասնագիտական կողմնորոշման գործում: Ըստ օրենսդրության կա հատուկ կետ, որտեղ նշվում է ծնողի և նրա պարտականությունների փոխարինողների իրավունքների, պարտականությունների բնագավառում[4]: Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են ինչը աշակերտի կրթության վճռորոշ տարրն է: Շատ է քննարկվում ծնողներին ներգրավելու ձևի

[4] Էլոյան Տ.Ս., Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան; Լույս 1980թ. էջ 152

հարցը: Որոշ մարդկանց կարծիքով ծնողների դերը սահմանափակվում է երեխաների կարգապահությանը հետևելով և ուսուցիչներին աջակցելով: Մյուսներն այդ դերն ավելի ընդլայնված են ընկալում: Ըստ նրանց՝ ծնողներն պետք է կարողանան երեխաներին օգնել տնային աշխատանքները կատարելիս, մասնակցեն ծնող-ուսուցիչ կոնֆերանսներին, համադպրոցական ծնողական ժողովներին: Ծնողներն իրենք էլ են ցանկանում ընդգրկվել իրենց երեխաների կրթության գործում: Միայն թե շատերը չգիտեն, թե ինչպես: Կրթության գործում ծնողների ներգրավելու հնարավորություններ ստեղծելիս պետք է հարցնել նաև ծնողի կարծիքը: Դրական և արդյունավետ դպրոցական միջավայր ստեղծելու գործում, աջակցության մեկ այլ աղբյուր է դպրոցական կյանքում ծնողների ներգրավումը: Ծնողները իրենց երեխաների դաստիարակության և կրթելու գործում դառնում են ուսուցչի գործնկերները: Նրանք իրենց երեխաների համար ունեն նույն նպատակները, ինչ որ ուսուցիչները՝ բոլոր երեխաների համար: Ծնողներն ու դպրոցը միասին են պատասխանատու զարգացման բոլոր ոլորտներում: Կրթության հարցում ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար կարելի է թույլ տալ, որ ծնողները դասավանդեն՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները: Իրենց ծնողներին տեսնելով դպրոցի կյանքում ներգրավված և համագործակցելիս՝երեխաներն իրենց ավելի կարևոր մարդ են զգում: Ընտանքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից շահում են բոլոր երեխաները:

1.2 ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ հասարակական, տնտեսական և քաղաքական նոր հարաբերությունների պայմաններում հասարակության զարգացումն ընթանում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական խոր փոփոխություններով ու տեղաշարժերով, որոնք հրամայաբար պահանջում են համակողմանի զարգացած, ինքնուրույն, ստեղծագործ, պետական մտածելակերպ ու գաղափարաքաղաքական ակտիվ դիրքորոշում ունեցող մարդու ձևավորում: Անառարկելի է, որ մարդու կողմից արտաքին աշխարհի գնահատումն իրականանում է սեփական ներաշխարհի ճանաչման և ինքնագնահատման միջոցով առաջնորդվելով բարու,

գեղեցիկի, արդարության և ճշմարտության և այլ բարձրագույն չափանիշների տեսանկյունով[5]:

Ծնողները և աշակերտները կարևոր գործընկերներ են գիտելիքների գնահատման գործընթացում: Աշակերտները ավելի ինքնագնահատող են երբ իրենք են վերահսկում իրենց ուսուցումը: Կարծում ենք օրագիրը ծառայում է իր նպատակին, այսինքն՝ երեխան գիտի ամիսը, ամսաթիվը դասացուցակը և կարողանում է վերլուծել և ինքնագնահատման միջոցով իր համար բացահայտում անել իր առաջադիմության մասին: Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այս պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք անց են կացնում երեխայի հետ նրա օրվա մեծ մասը: Համաձայն Ա. Ադլերի, իդեալական դպրոցը պետք է միջնորդի դեր կատարի երեխայի ընտանիքի և կյանքի միջև, պետք է լինի այնպիսի վայր, որտեղ երեխան ձեռք է բերում ոչ միայն «գրքային» գիտելիքներ, այլև սովորում է «կյանքի արվեստին»[6]:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց ու երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Երեխաների ծնողների, ուսուցիչների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորումն ամենից առաջ պայմանավորված է այն

[5] Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: «Ուրարտու» համալս., 2010թ. էջ 456

[6] Արզումանյան Ս. Ջ. Անբարենպաստ ընտանիքի սոցիալ հոգեբանական բնությագիրը, «Հոգեբանությունը և կյանքը», N2, 2000թ. էջ 17

հանգամանքով, թե այդ գործընթացում ավագների միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են: Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ են

քննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները: Դասղեկը ծնողներին ներգրավում է դպրոցի կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում.

- Երեխաների դաստիարակությանը վերաբերող դպրոցական կյանքի հիմնախնդիրների քննարկում և լուծում,
- Ծնողների մասնակցություն դաստիարակչական աշխատանքներին և միջոցառումներին, ուսումնական կաբինետների ձևավորմանը, արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը,
- Ծնողների մասնակցություն դպրոցում և դասարանում ինքնակառավարման մարմինների (ծնողական ժողովներ, համաժողովներ, ծնողական կոմիտեներ և այլն) ստեղծմանը, դրանց գործունեության կազմակերպմանը:

Ուսուցիչների, դասղեկների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողների և երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական միջոցառումների կազմակերպումը նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների և սովորությունների ներկայացմանը: Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների նկատմամբ

հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Իսկ ինչպե՞ս արթնացնել ուսուցիչների նախաձեռնողականությունը, դպրոցական կոլեկտիվում ստեղծել մանկավարժական նախագծի իրականացման ուղղությամբ գործունեության դրական դրդապատճառներ: Ինչպես Վ. Հյուգոն էր ասում, «Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ և կազմում նրա անկապտելի մասը»: Կարևորը ճիշտ դաստիարակության սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ, հոգատար, հանգիստ, հավասարակշռված և ուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների և ուսուցիչների հետ: Ծնողները երեխայի առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ՝ իրենց երեխաների կյանքի, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար: Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական տարիքի երեխաների կրթության համար: Իսկ պետությունը պարտավոր է որդեգրել մի այնպիսի կրթական համակարգ, որը կապահովի մարդու ամբողջ կյանքի ուսումնառությունը և անձնական զարգացման համար անհրաժեշտ հիմքեր: Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները և պատասխանատվությունը ժամանակակից հասարակության մեջ երեխաները և ընտանիքներում, և դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Հենց առաջին օրերից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

2.1. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Երեխայի կյանքը բաղկացած է երկու կարևոր ոլորտներից՝ դպրոցից և ընտանիքից, որոնք ենթակա են փոփոխության և զարգացման։ Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում, ինչպիսի գործնական հմտություններով է առաջին անգամ մտել դպրոցական կոլեկտիվ, որոնք են երեխային շրջապատող մարդկանց դաստիարակչական ներգործությունների թույլ և ուժեղ կողմերը, համաձայնեցվում է արդյոք ընտանեկան դաստիարակությունը դպրոցում իրականացվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ, ինչպես է ծնողների միջոցով իրականացվում դպրոցի ազդեցությունը երեխաների վրա և այլն։ Ընտանիք ինստիտուտի ուղղությամբ հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակների տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային զարգացումները դեռևս շարունակվում են էապես ազդել ընտանիքի մոդելի վրա։ Այդ իսկ պատճառով մեծանում է ընտանիքի «ռիսկայնության» հավանականությունը, և ապագա սերնդի դաստիարակության պատասխանատվությունն ընկնում է դպրոցի վրա։ Դպրոցի ուսուցիչները, փոխտնօրենները, տնօրենը սովորաբար մշտական կապ են պահպանում ընտանիքների հետ։ Նրանք երեխաների դաստիարակության մեջ հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողների հետ, մշակում համատեղ ծրագրեր և գտնում դրանց իրականացման արդյունավետ եղանակներ։ Բայց այդ՝ դպրոցի և ընտանիքի ընդհանուր ջանքերն այն դեպքում ցանկալի արդյունքների կհասնեն, երբ ընտանիքն իմանա, ինչ է անում դպրոցը,

իսկ դպրոցն էլ թե ինչ պայմաններում և ինչպես են դաստիարակվում երեխաներն ընտանիքում: Ծնողների հետ այդպիսի շփումների բացակայության դեպքում կրթության կազմակերպիչները հաճախ դժվարանում են աշակերտների հետ իրենց աշխատանքում, չեն կարողանում նրանց նկատմամբ գտնել ճիշտ մոտեցում, թույլ են տալիս սխալներ և այլն: Դպրոցականների ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերն են՝

♦ համադպրոցական, դասարանական ծնողական ժողովները.

♦ դպրոցականի տուն կատարվող այցերը,

♦ ծնողներին դպրոց հրավիրելը,

♦ աշխատանքը ծնողական ակտիվի հետ,

♦ անհատական զրույցները և խորհրդատվությունները ծնողների համար,

♦ ծնողական համալսարանները, կոնֆերանսները և երեխաների դաստիարակության լավագույն փորձի փոխանակումը,

♦ դպրոցի կապը այն հիմնարկների հետ, որտեղ աշխատում են ծնողները,

♦ աշակերտական գործերի, հատկապես ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպումը[7]:

Դասարանի ծնողական ժողովները: Ծնողական ժողովների կազմակերպումը դպրոց-ընտանիք համագործակցության ավանդական, ամենատարածված և արդարացված ձևն է: Ծնողական ժողովների նպատակները, բովանդակությունն ու ձևերը պետք է որոշվեն՝ հիմք ընդունելով սովորողների, ծնողների և ծնող-դպրոց-երեխա համագործակցության ձևերն ու կարիքները: Այս խնդիրները մանկավարժորեն ճիշտ և բարձր մակարդակով կազմակերպելու, ծնողական ժողովը ծագած խնդիրներին, ծնողների մանկավարժական լուսավորությանը ծառայեցնելու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մշակի ծնողական ժողովների թեմատիկա: Ծնողական ժողովները չպետք է կազմակերպել միայն ուսումնական տարվա սկզբում և ուսումնական կիսամյակի վերջում: Նրանք պետք է նվիրվեն ոչ միայն դասարանում իրականացվող կրթադաստիարակչական խնդիրներին, այլև ուղղված լինեն դպրոց-ընտանիք համագործակցության

[7] Նալչաջյան Ա.Ա, Ակրտչյան Ա, Ընտանիքի հոգեբանություն: Երևան, Զանգակ97, 2001, 129 էջ,

խնդիրներին, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, ծնողների հոգեբանամանկավարժական, գեղագիտական գիտելիքների հարստացմանը:

Այցելություններ դպրոցականի ընտանիք: Այս ձևը դպրոցում աշակերտների ծնողների հետ անհատապես աշխատելու ամենատարածված և արդյունավետ ձևն է: Աշակերտների ընտանիք այցելելիս ուսուցիչը ծանոթանում է իր աշակերտի ընտանեկան պայմաններին, պատկերացում է կազմում աշակերտի բնավորության, նրա հետաքրքրությունների ու հակումների, մեծերի և փոքրերի հետ նրա փոխհարաբերությունների մասին:

Ծնողներին դպրոց հրավիրելը: Դպրոցի փոխտնօրենը, տնօրենը հաճախ զգում է ծնողներին հանդիպելու, նրանց հետ խորհրդակցելու կարիք՝ առանց ընտանիք այցելելու: Այդ դեպքում ծնողները հրավիրվում են դպրոց: Այսպիսի հանդիպումները տալիս են դաստիարակության և ուսուցման շատ հարցեր համատեղ վճռելու հնարավորություն: Ծնողներին չպետք է հրավիրել դպրոց միայն այն դեպքում, երբ աշակերտը թույլ է տվել կարգապահական որևէ խախտում կամ սկսել է վատ սովորել: Երբեմն նա իրեն վատ չի պահում, սովորում է լավ, բայց կրթության կազմակերպիչները ուզում են ծնողների հետ պայմանավորվել այդ աշակերտի արտադասարանական ընթերցանությունը կազմակերպելու, նրան հանրօգուտ որևէ աշխատանքում ընդգրկելու, երեխայի ընդունակությունները որևէ բնագավառում զարգացնելու, ընկերների հետ փոխհարաբերությունների և այլ խնդիրների մասին զրուցելու նպատակով:

Աշխատանք ծնողական ակտիվի հետ: Ծանոթանալով աշակերտների ծնողների հետ՝ ուսուցիչը ստեղծում է ծնողական ակտիվ, որն իրեն հաճախակի օգնություն է ցուցաբերում և աջակցում դպրոցականների դաստիարակության և ուսուցման գործում: Շատ ծնողներ հաճախակի այցելում են դպրոց, հետևում են մանկավարժական նորություններին, այդ մասին իրազեկում են ծնողական կոլեկտիվին, ակտիվ կերպով մասնակցում են ծնողական ժողովների կազմակերպմանը, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակմանը նվիրված միջոցառումներին և այլն:

Այսպիսով, դպրոց-ընտանիքի համագործակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է տվյալ դպրոցում դաստիարակության գործընթացը կառավարողի՝ կրթության կազմակերպիչների անհատական առանձնահատկություններով, մանկավարժական վարպետությամբ, ծնողների մանկավարժական իրազեկվածությամբ և դպրոց-ընտանիք համագործակցությամբ: Դպրոցականի համար գլխավորն այն է, որ նա զգա մեծերի ուշադրությունն ու աջակցությունը, նրանց հետաքրքրություններն իր ուսումնական հաջողությունների նկատմամբ[8]: Եվ եթե տարրական դպրոցում երեխայի մեջ պահպանվի հետաքրքրությունն ու հայտնագործելու ընդունակությունը, սերը ուսման նկատմամբ, կարելի է ասել, որ հետագա ուսումնառությունը կլինի արդյունավետ, և նա ուսումնական հաջողություններ կունենա նաև միջին և ավագ դպրոցում: Այս համատեքստում տեղին է հիշել ականավոր մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկու խոսքերը. «Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն բոլորի համար, թե՛ ուսուցիչների՛, թե՛ ծնողների»:

2.2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման եվ ընտանեկան դաստիարակության հարցերում, դպրոց - ընտանիք կապի ամրապնդման զարգացման գործում ուսուցիչների դերի ուսումնասիրության նպատակով իրականացրել ենք հետազոտական աշխատանք՝ կիրառելով անկետավորման, փորձագիտական հարցման, վերլուծության և մաթեմատիկական-վիճակագրական մեթոդները: Հարցման մասնակիցներ են հանդիսացել ՀՀ Շիրակի մարզի Գետք համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, տնօրենի տեղակալները և ուսուցիչներ: Ընդհանուր առմամբ հարցումներին մասնակցել են 20-ը: Հարցումներից ստացված արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Հարցման նպատակը՝ ուսումնասիրել ուսուցչի և ծնողի դերակատարությունը դպրոց-ընտանիք կապի ամրապնդման համատեքստում:

[8] Նալչաջյան Ա.Ա, Ակրտչյան Ա, Ընտանիքի հոգեբանություն: Երևան, Զանգակ97, 2001, էջ 24

Հարցման մասնակիցները, ինչպես նշեցինք, հանդիսացել են հանրակրթական դպրոցի ուսուցիչներ՝ որպես կրթական գործընթացի անմիջական ապահովողներ: Ստորև ներկայացնում ենք հանրակրթական դպրոցների ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների արդյունքները:

1. Այն հարցին թե ո՞վ է իրականացնում դպրոց-ընտանիք կապը, հարցման մասնակիցների 70%-ը պատասխանեց՝ դասղեկը, 20%-ը կարծում է՝ դպրոցի տնօրենը, իսկ 10%-ը ՝ սոց. մանկավարժը:(տես՛ գծ.1)

Գծապատկեր 1. Ո՞վ է իրականացնում դպրոց-ընտանիք կապը :



2. Արդյո՞ք օգնում է ծնողը երեխային ուսման գործում, հարցին հարցման մասնակիցների 65%-ը պատասխանեց՝ այո, 20%-ը՝ ոչ, մյուս 15%-ը պատասխանել է երբեմն: (տես՛ գծ.2)

Գծապատկեր 2. Արդյո՞ք օգնում է ծնողը երեխային ուսման գործում:



3. Իրականացնու՞մ եք համատեղ կրթադաստիարակչական աշխատանքներ երեխաների հետ, հարցվողների 95%-ը պատասխանել է՝ այո, 5%-ը երբեմն: (տես՛ գծ.3)

Գծապատկեր 3. Իրականացնու՞մ եք համատեղ կրթադաստիարակչական աշխատանքներ երեխաների հետ:



4. Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի ուսուցման և դաստիարակման գործընթացում: Հետևյալ հարցին պատասխանողների 90%-ը պատասխանեց՝այո, 10%-ը՝երբեմն: (տես՛ գծ.4)

Գծապատկեր 4. Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի ուսուցման և դաստիարակման գործընթացում:



5. Ձեր կարծիքով երեխան ուսումնական գործընթացում դժվարությունների հանդիպելիս, հաճա՞խ է դիմում ծնողին, այս հարցին պատասխանողների 50%-ը պատասխանեց՝ այո, 30%-ը՝ ոչ, 20%-ը՝ երբեմն: (տես՛ գծ.5)

Գծապատկեր 5. Ձեր կարծիքով երեխան ուսումնական գործընթացում դժվարությունների հանդիպելիս , հաճա՞խ է դիմում ծնողին:



6. Ինչպիսի՞ հաճախականությամբ եք շփվում աշակերտների ծնողների հետ : Հարցմանը մասնակիցների 65%-ը պատասխանեց՝ անհրաժեշտության դեպքում, 30%-ը `ծնողական ժողովների ժամանակ, իսկ 5%-ը `հազվադեպ: (տես՛ գծ. 6)

Գծապատկեր 6. .Ինչպիսի՞ հաճախականությամբ եք շփվում ձեր աշակերտների ծնողների հետ:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ կրթության առաջնային շահակիցների՝ աշակերտների կրթության որակի բարձրացման, դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական բազմաբնույթ միջոցառումների իրականացմանը զուգահեռ, հանրակրթական դպրոցի ուսուցիչների և այլ մանկավարժական աշխատողների առաջնային պարտականությունն է նաև դպրոց-ընտանիք կապի անքակտելի ապահովումը: Այս համատեքստում արված ուսումնասիրությունների և հետազոտական աշխատանքի արդյունքում կարող ենք առանձնացնել հետևյալ եզրակացությունները՝

- Կրթության որակի բարձրացման համար էական դերակատարում ունի աշակերտների ծնողների հետ տարվող շարունակական աշխատանքը:
- Ծնողը երեխայի դաստիարակության գործընթացում առաջնային օղակ է, ուստի դպրոցում տարվող դաստիարակչական աշխատանքի հետ ծնողի՝ ընտանիքում իականացվող աշխատանքը պետք է լինի փոխկապակցված և ծառայի մեկ նպատակի՝ ապահովել սովորողի հիմնարար իրավունքը՝ ստանալ բարձրորակ ու արդյունավետ կրթություն ու դաստիարակություն:
- Այս գործընթացում առանցքային դերակատարում ունեն հանրակրթական դպրոցի տնօրենն ու փոխտնօրենը, ում անմիջական վերահսկողությամբ դասղեկը, սոցիալական մանկավարժը և հոգեբանը պետք է իրականացնեն հանդիպումներ ծնողների հետ, իրականացնեն մշտադիտարկումներ՝ հարկ եղած դեպքում ծնողի կամ երեխայի հետ կատարելով անհատական աշխատանք:
- Ծնող –երեխա- դպրոց կապի կայացման գործում շատ կարևոր է, որ բոլոր օղակները բնականոն կերպով կատարեն իրենց գործառույթներն ու պարտականությունները, գործընթացը իրականացվի հնարավորինս արդյունավետ:

- Հատուկ դեպքերում, երբ աշակերտը գտնվում է թիրախային խմբում, ծնողի հետ անհրաժեշտ է իրականացնել համակարգային աշխատանք, որի հիմնական դերակատարներն են հանդիսանում ոչ միայն դասղեկն ու սոցիալական մանկավարժը, այլ հարկ եղած դեպքում նաև հաստատության տնօրենը, փոխտնօրենը, հոգեբանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ.Թ.,. Կարապետյան Ա. Ս., Ասատրյան Մ. Ա. Ցոլակյան Թ. Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները. Երևան 2003թ.
2. Արզումանյան Ս. Ջ. Անբարենպաստ ընտանիքի սոցիալ հոգեբանական բնությագիրը, «Հոգեբանությունը և կյանքը», 2000թ.
3. Բալյան Ա.Ա.,Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան; Լույս 1983թ.
4. Էլկոնին Դ. Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն ,Երևան; Լույս 1975թ.
5. Էլոյան Տ.Ս., Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան; Լույս 1980թ.
6. Խուդոյան Ս. Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան; Զանգակ 2004թ.
7. Ծնողների ու երեխաների փոխգործակցությունը որպես հոգեբանամանկավարժական հիմնախնդիր, «Մխիթար Գոշ», Երևան2005թ.
8. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան; Լույս 1976թ. կառավարման հիմունքները. Երևան 2003թ.
9. Հակոբյան Ա. Ա., Մանկավարժական գործունեության հիմունքներ,, Ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու), Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007
10. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկանդաստիարակության առանձնահատկությունները փոխակերպվող հասարակության մեջ, Գիտական տեղեկագիր, 1-2 -Եր.: Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, 2018թ.
11. Մանուկյան Ս. Պ., Նպատակահարուց ուսուցման տեսությունն ու պրակտիկան, Երևան 1998
12. Նալչաջյան Ա.Ա, Ակրտչյան Ա, Ընտանիքի հոգեբանություն: Երևան, Զանգակ97, 2001,

13. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: «Ուրարտու» համալս., 2010թ.
14. Буянов М. Н. Ребенок из неблагополучной семьи. М., 1988,
15. https://abalvlup.ru/hy/istoriya/tradicii-v-sotrudnichestve-so-shkoloi-i-roditelyami-sotrudnichestvo-detskogo-sada/
16. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf